ԹՐԱՆՍՓԱՐԵՆՍԻ ԻՆԹԵՐՆԵԾՆԼ
հակակոռուպցիոն կենտրոն

Պետության կողմից տրված դրամաշնորհային ծրագրի աուդիտի իրականացման բաց մրցույթի
ՀՐԱՎԵՐ

Ընդհանուր տեղեկություններ

Թրանսփարենսի ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոնը (այսուհետ՝ ԹԻՀԿ) հիմնադրվել է 2000թ.-ին և գործում է որպես Թրանսփարենսի Ինթերնեշնլ (ԹԻ) կոռուպցիայի դեմ պայքարող համաշխարհային շարժման հավատարմագրված ներկայացուցչություն Հայաստանում: Կազմակերպության առաքելությունն է՝ կոռուպցիան նվազեցնելու և ժողովրդավարությունն ամրապնդելու միջոցով նպաստել լավ կառավարմանը Հայաստանում: Կազմակերպության նպատակներն են՝ աջակցել արդյունավետ հակակոռուպցիոն քաղաքականությանը և թափանցիկ ու հաշվետու կառավարմանը, խթանել ազատ և արդար ընտրությունների անցկացումը և հանրային ռեսուրսների թափանցիկ ու հաշվետու կառավարումը: Կոռուպցիայի դեմ պայքարում շոշափելի արդյունքների հասնելու համար ԹԻՀԿ-ն երկարատև տեսլական է սահմանել «Ձևավորել պայքարող քաղաքացի հանուն կոռուպցիայից զերծ Հայաստանի»:

Ծառայության նպատակ և նկարագրություն

ԹԻՀԿ-ն հրավիրում է աուդիտորական կազմակերպություններին ներկայացնելու հայտեր՝ պետության կողմից տրամադրված դրամաշնորհի շրջանակներում իրականացված ծրագրի ֆինանսական աուդիտի համար (ստացված դրամաշնորհի բյուջեն՝ 60,673,200.00 ՀՀ դրամ, փաստացի կատարված ծախսերը՝ 25,666,706.49 ՀՀ դրամ):

Ժամկետներ

Հայտերի ներկայացման վերջնաժամկետը 2020 թ. հունիսի 8-ն է: Ծառայության մատուցումը նախատեսվում է սկսել հունիսի 18-ից: Աուդիտորական եզրակացությունը և «Նամակ ղեկավարությանը» փաստաթղթերը պետք է ներկայացվեն ոչ ուշ, քան 2020թ. հուլիսի 10-ը:

Ակնկալվող արդյունքներ

- Պետության կողմից տրամադրված դրամաշնորհի շրջանակներում իրականացված ծրագրի ֆինանսական աուդիտ;
- Աուդիտորական եզրակացություն;
- Աուդիտի արդյունքում կազմված «Նամակ ղեկավարությանը» փաստաթուղթ:

Տեխնիկական գնահատում

Հայտերի ընտրությունը կիրականացվի հետևյալ չափորոշիչների հիման վրա՝

- Աուդիտի իրականացման ժամկետ (30%)
- Նմանատիպ առաջադրանքների իրականացման փորձ և կազմակերպությունների ցանկ, որոնց համար թեկնածուն կատարել է նմանատիպ առաջադրանք (30%)
- Ծառայության արժեք (40%)

Դիմելու ընթացակարգ

Մրցույթին մասնակցելու համար աուդիտորական կազմակերպությունները պետք է էլեկտրոնային եղանակով ներկայացնեն հայերենով տեխնիկական և ֆինանսական հայտերը՝ կնքված և (կամ) ստորագրված մեկական ֆայլով, որը պետք է ներառի հետևյալ տեղեկատվությունն ու փաստաթղթերը՝

1. Տեխնիկական հայտ.

ա) աուդիտորական կազմակերպության պորտֆոլիոն, ներառյալ՝ մրցույթի մասնակցի լրիվ անվանումը, գտնվելու վայրը, հեռախոսահամարը, պետական գրանցման վկայականի, աուդիտորական գործունեությամբ զբաղվելու լիցենզիայի պատճենները,

- ծառայությունների մատուցման բնութագիրը,
- պետական գրանցման վկայականի և աուդիտորական գործունեությամբ զբաղվելու լիցենզիայի պատճենները,
- աուդիտորների ինքնակենսագրականները և աուդիտորների որակավորման և մասնագիտական վերապատրաստման վկայականների պատճենները,
- նախորդ հաշվետու տարվա ընթացքում իր կողմից պետական դրամաշնորհներ ստացած կազմակերպություններին նմանատիպ ծառայությունների մատուցման ցանկը,
- մրցույթի մասնակցի հայեցողությամբ այլ անհրաժեշտ տեղեկություններ և փաստաթղթեր, որոնք կհաստատեն իր կողմից մատուցվելիք ծառայությունների որակը,
- ծառայությունների մատուցման երաշխիքային ժամկետները:

2. Ֆինանսական հայտ.

- ծառայությունների մատուցման ընդհանուր գինը (ներառյալ բոլոր տեսակի ծախսերը, այդ թվում՝ նաև հարկերը, տուրքերը և այլն) և վճարման ձևն ու պայմանները,
- մրցույթի մասնակցի հայեցողությամբ ծառայությունների մատուցման ֆինանսական կողմին վերաբերող այլ անհրաժեշտ տեղեկատվություններ և հիմնավորող փաստաթղթեր:

Հայտարարության պահանջներին չհամապատասխանող մրցույթի հայտերը, ինչպես նաև 2020 թ.ի հունիսի 8-ից հետո ներկայացված մրցույթի հայտերը չեն դիտարկվելու, իսկ մերժվածները կտեղեկացվեն էլեկտրոնային փոստով:

Խնդրում ենք վերը նշված փաստաթղթերն ուղարկել հետևյալ էլ. հասցեին՝ lusine@transparency.am՝ նամակի վերնագիր նշելով «Աուդիտի առաջարկ»:

Լրացուցիչ հարցերի դեպքում խնդրում ենք զանգահարել 095 81 07 09 հեռախոսահամարով: